ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ

Զանգեզուրը իր ներկա երեք վարչական շրջանների սահմաններով Անդրկովկասի այլ գավառների հետ համեմատած ռուսական տիրապետության հաստատվելուց հետո էլ շատ դանդաղ էր փոխում իր հնավանդ տնտեսական և կենցաղային ձևերը։ Այստեղ մեծ հապաղումով էր անդրադառնում այն նոր տնտեսական պայմանների ազդեցությունը, որոնք ստեղծվել էին Վրաստանում և անդրկովկասյան խանությունների մեջ Ռուսաստանի հետ միացման, նրա գյուղատնտեսական և արդյունաբերական կյանքին անմիջապես մասնակից դարձնելու հետևանքով։ Զանգեզուրը երկար տասնամյակներ մի կողմ մնաց նոր կառուցված մեծ ճանապարհների ուղղությունից, որոնցով գոտևորվում էր Անդրկովկասը։ Հին քարավանային ճանապարհները, որոնք ելնելով Թավրիզից և Նախիջևանից, Ագուլիսի և Մեղրու վրայով XVII դ. սկզբներից սկսած տեղափոխում էին պարսկական և հնդկական ապրանքները Շամախի և այնտեղից Ռուսաստան՝ կորցնում են իրենց աշխուժությունը և նույնիսկ մոռացության են մատնվում։ Այժմ ապրանքներն ուղղվում են ռուսական շուկաներն արդեն Կասպից ծովի վրայով կամ լավ մշակված խճուղու վերածված և զինվորական պահակներով անվտանգ դարձած Դարյալի կիրճով՝ Ռազմա-վիրական ճանապարհով։ Վերջին ուղղությունը նպաստում էր այս ճանապարհի ելակետին կանգնած Թիֆլիսի նշանակության բարձրացմանը։ Թիֆլիսից դեպի Բաքու ուղղված խճուղու այն ճյուղը, որը Շուշի էր հասցրած, շատ ուշ շարունակվեց դեպի Գորիս և մինչև Զանգեզուրում սովետական կարգերի հաստատումը չմշակվեց ավելի հեռու— ոչ Բիչենաղի՝ այժմ Սիսիանի լեռնանցքով դեպի Նախիջևան և ոչ էլ մանավանդ դեպի Մեղրի և Ագուլիս, ինչպես նախագծված էր։ Շուշի—Գորիս անցկացրած խճուղին էլ շարունակ մնում էր այն վիճակի մեջ, որը «Մշակի» թղթակիցը 1890 թվին այսպես էր նկարագրում՝[1] թե ոչ խճով է ծածկված, ոչ էլ կամուրջներն են վերջացրած, ոչ էլ կայարաններում փոստային ծառայության վարժ կառապաններ կան, ոչ էլ ըստ պայմանագրի բավական թվով կառքեր և ձիեր։ Կապանից՝ պղնձի, իսկ ամբողջ գավառից՝ բրդի և բոժոժի փոխադրությունը մինչև վերջին տասնամյակները կատարվում էր ուղտերի և ջորիների քարավաններով։ Այսպիսի հանգամանքների մեջ զարմանալի չէ, որ Զանգեզուրը մինչև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելը «անիվ չգիտցող աշխարհ» էր մնում— սայլերն ու կառքերը այստեղ գործածության մեջ չէին։ Դժվարացած էր ռու-

[1] Մշակ, 1890, № 73։